

**ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՏՐԱՆՇ 2՝ ԱՇՏԱՐԱՎ – ԹԱԽՆ**

**ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱՔՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ
ԱՄՓՈՓԱԳԻՐ**

Հողի օտարման և տարաբնակեցման Ծրագրի նախագիծը (ՀՕՏԾ) մշակվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, այն է՝ Բազմափուլ ֆինանսավորման գործիքն իրականացնող գործակալության կողմից (ՀՀ ՏԿՆ), որպես Ծրագրի (Ծրագիր) Տրանշ 2-ի հաստատման Պարբերական ֆինանսավորման հայտի (ՊՖՀ) օժանդակությանն ուղղված ուսումնասիրությունների մի մաս: Ծրագրի նպատակն է բարելավել Աշտարակ-Թալին առկա մայրուղին՝ ներկայիս երկերթնեկաշերտ ավտոճանապարհից դարձնելով այն երկու ուղղություններով երկերթնեկաշերտ, միջազգային ընդունված չափանիշներին համապատասխան ավտոմայրուղու: Գոյություն ունեցող ավտոճանապարհի լայնացումը կունենա Հողի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) հետևանքներ: Դրանք գնահատելու և անհրաժեշտ փոխհատուցման/վերականգնման միջոցառումները պլանավորելու համար ՏԿՆ-ն պատրաստել է ՀՕՏ ծրագիր (ՀՕՏԾ), որի նպատակն է գնահատել Տրանշ 2-ի ազդեցությունները, ինչպես նաև փոխհատուցման/վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների պլանը: Փաստաթուղթը համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը և կանոնակարգերին, ԱԶԲ-ի՝ Սոցիալական անվտանգության քաղաքականության շրջանակին (2009թ) և Ոչ կամավոր տարաբնակեցման քաղաքականությանն (1995թ.) ու Ծրագրի՝ Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակին (ՀՕՏԾ): ՀՕՏԾ-ի վերջնական տարբերակը կպատրաստվի ծրագրի վերջնական/մանրամասն նախագծման փուլում և կներառի փոխհատուցման վերջնական բյուջեն: Տրանշ 2-ի վերջնական նախագիծը ներկայումս մշակվում է, և վերջնական ՀՕՏԾ-ը, որը պետք է պատրաստվի հիմնվելով վերջնական նախագծի վրա, ակնկալվում է, որ պատրաստ կլինի 2011թ-ի օգոստոսին:

Վերջինի մշակումը ներառել է՝ (i) Մանրամասն չափման հետազոտությունը (ՄՉՀ), (ii) ակտիվների գնահատում/ազդեցության ենթակա հողամասերի լաբորատոր վերլուծությունը, (iii) մարզային իշխանությունների, համայնքների ղեկավարների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ խորհրդակցությունների արդյունքները, (iv) Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների (100%) շրջանում անցկացված մարդահամարի և (v) ԱԵՏՏ-ների սոցիալ-տնտեսական ուսումնասիրության արդյունքները: ՀՕՏԾ-ի պատրաստումը ներառում է, ՄՉՀ և ՍՏՀ եղանակով, ինտենսիվ խորհրդատվություններ բոլոր շահառուների, այդ թվում նաև ԱԵԱ-ների հետ:

Միջանկյալ ՀՕՏԾ-ն պատրաստվել է Տրանշ 2 Ծրագրի (Ծրագիր) համար: Ծրագրի նախապատրաստման նախնական և տեխնիկական իրագործելիության մշակման փուլերում հատուկ ուշադրություն է դարձվել հողի օտարման բացասական ազդեցությունների նվազեցման վրա: Այնուամենայնիվ, Ծրագիրը ենթադրելու է զգալի քանակությամբ հողի օտարում և տարաբնակեցում՝ համաձայն Ա Կատեգորիայի դասակարգման:

Անվտանգության քաղաքականության ԱԶԲ հռչակագրի (ԱԲՀ), ինչպես նաև Բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) ձևավորած փորձառության հիման վրա, յուրաքանչյուր տրանշի կամ Ծրագրի իրականացման հաստատման գնահատումը հիմնված կլինի Հողի օտարման և տարաբնակեցմանն (ՀՕՏ) առնչվող հետևյալ պայմանների վրա.

- 1) ԲՖԳ/առաջին տրանշի գնահատում - նպատակը. ա) ԱԶԲ-ի և Կառավարության

համար ընդունելի ՀՕՏՀ-ի մշակում և հրապարակում ողջ ԲՖԳ-ի համար, բ) աղքատության և սոցիալական նախնական գնահատման (ԱՄՆԳ) պատրաստում և գ) հողի օտարում և տարաբնակեցում պահանջող յուրաքանչյուր տրանշի Ծրագրի համար ՀՕՏՀ-ի մշակում, որն ընդունելի կլինի ԱԶԲ-ի և Կառավարության համար:

2) Հաջորդող տրանշերի պարբերական ֆինանսավորման հայտի հաստատում - նպատակը. ա) ՀՕՏՀ-ի վերանայում/թարմացում/բացահայտում և բ) ՀՕՏ խնդիրներ ունեցող յուրաքանչյուր Ծրագրի համար ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության համար ընդունելի վերանայված ՀՕՏՀ-ին համապատասխան ՀՕՏՀ-ների պատրաստում և հրապարակում:

3) Պայմանագրի ստորագրում (ՀՕՏ պարունակող Ծրագրերի համար) - նպատակը. ա) ՀՕՏՀ-ի՝ որպես իրականացման ենթակա փաստաթղթի, վերջնական տեսքով ներկայացում և հրապարակում, և բ) աշխատանքները սկսելու պատրաստ (մոբիլիզացված) Արտաքին մոնիթորինգի գործակալության(ԱՄԳ) վարձում:

4) Կապալառուներին աշխատանքները սկսելու հրահանգավորում - պայմանավորված է համապատասխան ՀՕՏՀ-ի ամբողջական իրականացմամբ (փոխհատուցման և վերականգնման ամբողջական տրամադրում), որը պետք է ներկայացվի ԱՄԳ կողմից պատրաստվող Համապատասխանության հաշվետվության շրջանակներում: Նման պայմանը հստակ կշարադրվի շինարարական աշխատանքների պայմանագրում:

Ազդեցության կենթարկվի շուրջ 600 հողակտոր, որոնք ներառում են ոռոգվող հողակտորներ, պտղատու այգիներ, խաղողի այգիներ և արոտավայրեր: Ծրագրի տարածքում մշակվող հիմնական մշակաբույսերը հացահատիկային մշակաբույսերն են: Այդ թվում ցորեն ու գարի: Ազդեցության ենթակա տարածքներում առկա են ոչ մրգատու, դեկորատիվ և մրգատու, այդ թվում՝ ծիրան, դեղձ, խնձոր: Տրանշ 2-ի շրջանակներում ազդեցության են ենթարկվելու նաև համայնքային հողակտորներ, ինչպես նաև որոշ կառույցներ: Չնայած, որ բնակելի/համայնքային հողեր կօտարվեն, տարաբնակեցում չի լինի, քանզի բնակելի շինություններ և առևտրային մշտական կառույցներ ազդեցություն չեն կրի: Ծրագիրը կարող է նաև ազդել մի քանի ձեռնարկատիրական գործունեությունների վրա, ներառյալ այնպիսիները, որոնք զբաղեցնում են շինություններ և գույք, ինչպես նաև այնպիսիները, որոնք ներգրավված են “ճանապարհամերձ” առևտրի մեջ:

Ծրագրի իրականացումը Տեղաբնակների վրա զգալի ազդեցություն չի ունենա: ԱԶԲ-ի՝ Տեղաբնակների վերաբերյալ քաղաքականության (1998) համաձայն նախաձեռնված Տեղաբնակների վրա ազդեցության գնահատումը հենց դա է փաստում: Համաձայն այդ գնահատման արդյունքների, Ծրագիրը նախ և առաջ կազդի ազգությամբ հայերի վրա, մինչդեռ Ծրագրի ազդեցության ենթակա ՏՏ-ների միայն 1.2% է ազգային փոքրմասնություն (եզդիներ), ովքեր լավ ինտեգրված են ՀՀ հասարակության մեջ:

Ծրագրի իրականացման տարածքում կանայք կարևոր տնտեսական դերակատարում ունեն և ներգրավված են լայնածավալ եկամտաստեղծ գործունեություններում՝ ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ շուկայի հատվածներում: ԲՖԳ-ի Ծրագրի շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ ապահովվի կանանց տուժած գործունեության դիմաց փոխհատուցումը, այդ թվում նաև այն կանայք, ովքեր ԱԵՏՏ-ների փաստացի գլխավորողներն են, հստակ կներկայացվեն որպես վարկի շրջանակներում փոխհատուցման և վերականգնման միջոցառումների շահառուներ:

Իրականացման պատրաստ ՀՕՏՀ-ը կհիմնվի սույն միջանկյալ ՀՕՏՀ-ի վերջնական և թարմացված տարբերակի ներկայացման վրա և կմշակվի Մանրամասն նախագծի մշակման ընթացքում: Վերջինը կներառի ազդեցությունների թարմացված տարբերակները, ինչպես նաև համապատասխան ԱԵԱ-ների վերաբերյալ տեղեկատվությունը, փոխհատուցման հնարավոր վերանայված դրույքաչափերը, ինչպես նաև օրինականացման ենթակա ԱԵԱ-ների օրինականացմանն ուղղված ցանկացած վարչարարական աշխատանք:

ԲՖԳ Ծրագրի իրավական և քաղաքական շրջանակը հիմնված է ԱԶԲ-ի՝ Սոցիալական անվտանգության քաղաքականության հռչակագրին (2009թ.) և ՀՀ Սահմանադրության վրա, որը երաշխավորում է մասնավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը: Վերջինը նախատեսում է նաև, որ մասնավոր սեփականության իրավունքը կարող է կասեցվել գերակա պետական շահի բացառիկ դեպքերում՝ համապատասխան նախնական փոխհատուցմամբ, հիմնվելով ընդունված ընթացակարգի վրա: Հողի օտարման և փոխհատուցման հարցերը կարգավորվում են նաև Հողային օրենսգրքով, Քաղաքացիական օրենսգրքով, Պետական և հանրային կարիքների համար մասնավոր սեփականության օտարման մասին ՀՀ օրենքով: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի սեփականության իրավունքների գնահատումն իրականացվում է «ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման» մասին ՀՀ օրենքով սահմանվող ընթացակարգերով:

ԲՖԳ-ի Ծրագրի շրջանակներում փոխհատուցման, կամ առնվազն վերականգնման հավակնող ԱԵԱ-ների վերաբերյալ դրույթները հետևյալն են. (i) բոլոր ԱԵԱ-ները, ովքեր կորցնում են իրենց հողը, սակայն ունեն հողի սեփականության վկայական/ավանդական հողի իրավունքներ, օրինականացման ենթակա կամ առանց իրավական կարգավիճակի սեփականատերեր, (ii) բնավարձակալներ կամ բնօգտագործողներ՝ գրանցված կամ առանց գրանցման, (iii) Շինությունների, բերքի, տնկիների կամ հողին ամրակցված այլ օբյեկտների սեփականատերեր և (iv) Բիզնեսը, եկամուտը և աշխատավարձերը կորցնող ԱԵԱ-իք: Փոխհատուցում ստանալու հավակնությունը սահմանափակվում է սույն Ծրագրի համար սահմանված վերջնաժամկետով, որը ֆիքսվում է ԱԵԱ-երի մարդահամարը սկսելու օրը: Սույն Ծրագրի շրջանակներում ՀՕՏ առաջադրանքները կիրականացվեն փոխհատուցման հավակնության և իրավասությունների շրջանակի համաձայն՝ ՀՀ օրենքների և կանոնակարգերի, ինչպես նաև ԱԶԲ համապատասխան քաղաքականություններին համապատասխան: Իրավունքների ամփոփ սխեման ներկայացվում է ստորև:

Աղյուսակ 2: Իրավունքների սխեմա

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
1. Գյուղատնտեսական հողերի վերջնական կորուստ	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը անկախ ազդեցության աստիճանից	Սեփականատեր	Փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/, կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով: Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը:
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողօգտագործող	ԱԵԱ հնարավորության դեպքում պետք է ստանան օրինական կարգավիճակ և փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:
		Վարձակալ (համայնքային, պետական)	Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի "շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/" գումարած 15%" -ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողի արժեքի 25%:
Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա հողօգտագործող	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպատակ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1)		

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			Վինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2)Վինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) Վինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողի արժեքի 25%:
2. Ոչ գյուղատնտեսական հողեր	ԱԵՏՏ–ներ, որոնք կորցնում են իրենց առևտրային նշանակության կամ բնակելի հողերը	Սեփականատեր	Փոխհատուցում՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ +15%, կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով:
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողօգտագործող	Փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:
		Վարձակալ (համայնքային, պետական)	Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր ՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա , ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի “շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ գումարած 15%” –ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ 1)Վինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%; 2)Վինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3)Վինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) >25 տարի՝ հողի արժեքի 25%:
Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա հողօգտագործող	Այս ԱԵՏՏ–ները կստանան վերականգնման նպատակով ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք /որն ավելի բարձր է/ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) Վինչև 1)1 տարի՝ հողի արժեքի 5%; 2) Վինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%; 3) Վինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%; 4) 25 և ավել տարի՝ հողի արժեքի 25%:		
3. Բնակելի կառույցներ		Բոլոր ԱԵՏՏ–ները՝ անկախ սեփականության իրավական գրանցման կարգավիճակից	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքը + 15% չափով առանց ամորտիզացիոն մասնահատումների և գործարքային ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Վերաբնակեցվող վարձակալ	Վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպատակով՝ նշված սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում:
4. Ոչ բնակելի կառույցներ/գույք		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքը + 15%: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասնահատումների և գործարքի համար ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ–ի համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող ԱԵՏՏ	Փոխհատուցումը կիրականացվի վերոհիշյալ սկզբունքով, կառույցի օրինականացման/գրանցման դեպքում:
		Վերաբնակեցվող վարձակալ	Վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպատակով՝ սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում
5. Ընդհանուր սեփականության միջոցներ	Համայնքային/ պետական գույք	Համայնք/ պետություն	Համայնքի/ պետության իրավասու մարմնի համաձայնությամբ կորցրած կառույցների վերակառուցում և նրանց գործառնությունների վերականգնում:
6. Բերք	Ազդակիր Ազդեցության ենթակա բերքի զանգված	Բոլոր ԱԵՏՏ–ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Բերքի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ աննկալվող համախառն բերքի համար:
7. Ծառեր	Ազդեցության ենթակա ծառեր	Բոլոր ԱԵՏՏ–ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ	Շուկայական գներով հշվարկված՝ բերքի արժեքի դրամական փոխհատուցում ՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	
8. Ձեռնարկատիրություն/ գործարարություն	Ձեռնարկատերեր/գործարարներ	Բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Ձեռնարկատեր/անհատ ձեռներեց. ա) (մշտական ազդեցության դեպքում) միանվագ փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով; բ) (ժամանակավոր ազդեցության դեպքում) զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Փոխհատուցումը հիմնված է հարկային հայտարարագրի վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպաստ առավելագույն չհարկվող աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝ մինչև 1 տարի: Առավելագույն չհարկվող աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին: Մշտական աշխատողներ/ աշխատակիցներ. ա) (մշտական ազդեցության դեպքում) վեց ամսվա կորցրած նվազագույն աշխատավարձի չափով գումարի տրամադրում; բ) (ժամանակավոր ազդեցության դեպքում) մինչև վեց ամիս նվազագույն աշխատավարձի չափով գումարի տրամադրում՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով:
9. Ծանոթություն և ֆակտային ազդեցությունների դեպքում	Գյուղատնտեսական եկամտի 10 և ավել տոկոսի կորուստ կամ վերաբնակեցում	Հականորեն ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	1) Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողի մեկ տարվա բերքի չափով միանվագ փոխհատուցում: 2) 6 ամսվա վերաբնակեցման նպաստ վերաբնակեցման համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:
10. Ծանոթություն վերաբնակեցման դեպքում	Տրանսպորտի և տեղափոխումների ծախսեր	Տեղահանված բոլոր ԱԵԱ, ներառյալ վարձակալները	Տրանսպորտային և մեկ ամսվա համար կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում:
11. Ծանոթություն խոցելի անձանց		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող և (կամ) կանանց և (կամ) տարեց անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ:
12. Ժամանակավոր ազդեցություն		Բոլոր ԱԵՏՏ	Պատշաճ վարձակալություն և վերականգնման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար:
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն			Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՆ կանդիդատներն չեն նախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը, ըստ վերոհիշյալ պայմանների:

ԲՖԳ Ծրագրի ֆինանսավորողը կհանդիսանա ԱԶԲ-ն: ԲՖԳ Ծրագրի ՀՕՏ-ում ներկայացվող փոխհատուցման/վերականգնման առաջադրանքները ենթադրում են հստակ գործընթացներ և դինամիկա, ինչպես նաև տարբեր դերակատարներ: ԲՖԳ Ծրագրի պատասխանատուն ՀՀ ՏԿՆ-ն է: Դա ներառում է ՀՕՏ բոլոր առաջադրանքների նախապատրաստումը, իրականացումը և ֆինանսավորումը, ինչպես նաև միջգերատեսչական համակարգումը: ՀՀ ՏԿՆ-ն իր բոլոր գործառույթները կիրականացնի ԾԻԿ-ի միջոցով: ԾԻԿ-ը կլինի Իրականացնող գրասենյակը (ԻԳ), իսկ ՏԿՆ-ն հանդես կգա որպես Կատարող գրասենյակ (ԿԳ): ԾԻԿ-ը՝ վերահսկող խորհրդատուների օժանդակությամբ, յուրաքանչյուր ԲՖԳ Ծրագրի համար կմշակի և կիրականացնի ՀՕՏ՝ հիմնվելով ՀՕՏ-ի շրջանակներում սահմանված

քաղաքականության և ընթացակարգերի վրա: Ծրագրի վերահսկման, ինչպես նաև բարձր մակարդակով որոշումներ ընդունելու համար ստեղծվել է Ծրագրի կառավարման խորհուրդ (ԾԿԽ), որը կազմված է համապատասխան շահագրգիռ նախարարությունների ներկայացուցիչներից և ղեկավարվում է ՏԿԼ-ի կողմից: ԾԿԽ-ն կուսումնասիրի նաև ԱԵԱ-ների բողոքներով և այդ հարցում կլինի վերջնական որոշում ընդունողը՝ նվազեցնելով դրանց դատարան ներկայացնելու հավանականությունը:

Պետական կառավարման մի շարք այլ մարմիններ որոշիչ դերակատարություն կունենան ՀՕՏ-ի ընթացակարգերի շրջանակներում: Գործող օրենսդրության համաձայն, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն պատասխանատու է անշարժ գույքի սեփականության կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև սեփականության գրանցման համար:

Մարզպետարանի Տրանսպորտի վարչությունը կաջակցի ԾԿԽ-ի գործողություններին և, մասնավորապես, ՄՄ-ներին, ինչը կհեշտացնի տեղական ինքնակառավարման մարմինների հետ հաղորդակցությունը, կօժանդակի բողոքների, ինչպես նաև ԱԵԱ-ների փոխհատուցման տրամադրման ընթացքում: Համայնքային մակարդակում տեղական ինքնակառավարման մարմինները կօժանդակեն ուսումնասիրությունների անցկացմանը, բողոքների լուծմանն ու փոխհատուցման տրամադրմանը:

Տեղական ինքնակառավարման մարմինները ուղղակիորեն իրավասու են հողի վարչարարության և իրավունքի ճշգրտման/հավաստման համար: Կադաստրի պետական կոմիտեի տարածքային գրասենյակները կտրամադրեն իրենց գրասենյակներում առկա տեղեկատվությունը և կհեշտացնեն հաղորդակցությունը համայնքային իշխանության մարմինների հետ: Անհրաժեշտության դեպքում, համայնքային մարմինները կօժանդակեն ուսումնասիրությունների հանձնարարականների իրականացմանը, բողոքների կարգավորմանը, ԱԵԱ-ներին խորհրդատվության, ինչպես նաև փոխհատուցման տրամադրմանը:

Հասանելի կլինի բողոքարկման մեխանիզմ, որը հնարավորություն կընձեռի ԱԵԱ-ին բողոքարկել ցանկացած խնդրահարույց հարց, միջոցառում, գործողություն, որը կարող է առաջանալ հողի կամ այլ ակտիվների փոխհատուցման շրջանակներում: ԱԵԱ-ները լիարժեք տեղեկացված կլինեն իրենց իրավունքների, բողոքարկման մեխանիզմների մասին: Խոսքը թե բանավոր, և թե խորհրդատվության շրջանակներում գրավոր բողոքարկման, ինչպես նաև փոխհատուցման ժամանակի մասին է: Քայլեր կձեռնարկվեն բողոքները կանխարգելելու, այլ ոչ թե հետո առաջացած խնդիրները լուծելու համար: Վերջինը հնարավոր է ապահովել ՀՕՏ-ի մանրագին մշակման և իրականացման միջոցով՝ ապահովելով ԱԵԱ-ների հետ լիարժեք խորհրդակցությունն ու նրանց ներգրավվածությունը, ինչպես նաև ազդեցության ենթակա համայնքների, ԻԳ-ի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ինտենսիվ հաղորդակցությունն ու համակարգումը:

Շարունակական երկկողմ գործընթացին մարդկանց մասնակցությունն ապահովելու համար, մի շարք ընդգրկուն խորհրդատվական միջոցառումներ նախաձեռնվեցին սոցիալական և տարաբնակեցման Ծրագրի նախապատրաստման տարբեր փուլերում: Այդ թվում՝ Ճանապարհի տեղակայման/դիրքի տեխնիկական իրագործելիության ուսումնասիրություն, ազդեցության ենթակա հողերի կադաստրային ուսումնասիրություն, հողի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն, ինչպես նաև նպատակային խորհրդատվական հանդիպումներ՝ ազդեցության ենթակա համայնքների ղեկավարների և մարզի իշխանությունների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Մարզի իշխանություններին և համայնքների ղեկավարներին է ներկայացվել գրանցման վերաբերյալ տեղեկատվությունը և փոխհատուցման աղյուսակը՝ մարզային մակարդակում խորհրդակցությունների ժամանակ նախնական քննարկելու համար:

Մշակման աշխատանքներն ավարտելուց հետո ՀՕՏ-ն կթարգմանվի հայերեն և

տեղական մակարդակով կներկայացվի ԱԵԱ-ներին: ՀՕՏ-ի ամբողջական օրինակը հասանելի կլինի ՀՀ ՏԿՆ-ում: Այն կարող է տրամադրվել նաև ԱԵԱ-ներին, եթե նման դիմում-խնդրանք ստացվի: ՀՕՏ-ն կգետեղվի նաև ԱԶԲ-ի և ՀՀ ՏԿՆ-ի ինտերնետային կայքերում:

ՀՕՏ-ի իրականացման ժամանակացույցը կմշակվի՝ Տրանշ 2-ի ամբողջ Նախագծի իրականացման համաձայն: ՀՕՏ-ին վերաբերող բոլոր միջոցառումները կալանավորվեն այնպես, որ փոխհատուցման տրամադրումն ապահովվի նախքան վերաբնակեցումն ու շինարարական աշխատանքների մեկնարկը: Ծրագրի իրականացման ողջ ընթացքում պարբերաբար կնախաձեռնվեն հանրային քննարկումներ, ներքին մոնիթորինգ և բողոքների լուծման ընթացակարգեր: ՀՕՏ-ի իրականացման ակնկալվող տևողությունը 1 տարի է: Տրանշ 2-ի Ծրագրի տարաբնակեցման արժեքը ներառում է փոխհատուցման տրամադրումը, տարաբնակեցման օժանդակությունը, ինչպես նաև ՀՕՏ-ի իրականացման օժանդակ ծախսերը: ՀՕՏ-ի ընդհանուր արժեքը հաշվարկվելու Տրանշ 2-ի Ծրագրի իրականացման համար վերջնական ՀՕՏ-ի մշակման ընթացքում:

ՀՕՏ-ի իրականացման համար պատասխանատու կլինեն տարբեր կազմակերպություններ՝ յուրաքանչյուրն իր դերակատարությամբ և պարտականություններով: Ծրագրի շրջանակներում ծագող ՀՕՏ առաջադրանքները ենթակա են մոնիթորինգի: ՀՀ ՏԿՆ/ԾԻԿ-ը պատասխանատու կլինեն մոնիթորինգի համար: Ընթացիկ, ներքին մոնիթորինգը կիրականացվի ԾԻԿ-ի կողմից: Արդյունքները կներկայացվեն ԱԶԲ-ին՝ Ծրագրի իրականացման եռամսյակային հաշվետվությունների շրջանակներում: Անկախ մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) կողմից կիրականացվի արտաքին մոնիթորինգ, որի արդյունքները կներկայացվեն ՏԿՆ/ԾԻԿ-ին և ԱԶԲ-ին՝ կիսամյակային հաշվետվությունների տեսքով: ԾԻԿ-ի կողմից վարձված ԱՄԳ-ն ՀՕՏ-ի իրականացումից մոտ 1 տարի հետո կիրականացնի ՀՕՏ-ի ետիրականացման գնահատում: